ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2018 թվականի տարեկան գործունեության

2019 թվականի հունվարի 31-ին ժամը 14^{00}-ին տեղի ունեցավ Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվության ժողովը: Ժողովին մասնակցում էին Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչ Արշակ Ղորղանյանը, համայնքապետարանի, դպրոցի և բուժ. ամբուլատորիայի աշխատողները, ավագանու անդամները և համայնքի թվով 25 բնակիչներ:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2018 թ-ի ընթացքում կատարված աշխատանքները, այդ թվում.

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում համայնքապետարան է դիմել համայնքի թվով 97 բնակիչ, դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ստացվել է 415 գրություն և առաքվել է թվով 308 գրություն: Գյուղապետարանը նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում,կադաստրի տարածքային ստորաբաժնում միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և անցկացվել է համայնքի բնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառում, կատարվել է համայնքապատկան հիմնարկներում ամենամյա գույքագրման աշխատանքներ:

Կայացել է համայնքի ավագանու 6 հերթական և 8 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 45 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Մարտի 8-ի, Ապրիլի 24-ի, Մայիսի 9-ի, Մայիսի 28-ի և Սարդարապատի հերոսամարտի, դպրոցում վերջին զանգի, սեպտեմբերի 1-ի, Անկախության տոնի, ուսուցչի տոնի և ամանորի կապակցությամբ:

2. Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի տարեկան բյուջեի նախագիծը, օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով՝ 4 817 492 դրամ, հողի հարկի մասով՝ 3 945 614 դրամ և վարձակալական հողի մասով՝ 979 181 դրամ, տեղական տուրք՝ 236 400 դրամ, տեղական վճարներ՝ 1 349 160 դրամ: Գյուղապետարանը աշխատակազմի

աշխատակիցների աշխատավարձերի, սոց վճարների և եկամտահարկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3. Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ: Զին ծառայությունից խուսափողների թիվը հասցվել է նվազագույնի, ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում:

Աջակցվում և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Համայնքի Արցախյան պատերազմին մասնակցած զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն թվով 8 ընտանիքի 200 000 ՀՀ դրամ:

Ձմեռային զորակոչի զինակոչիկների ընտանիքներին թվով 8 ընտանիքի որպես ֆինանսական աջակցություն հատկացվել է 160 000 ՀՀ դրամ:

4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ: Մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Համայնքի ծերերի ազատ ժամանցը կազմակերպելու նպատակով տրամադրված խաղասենյակի նորոգման համար հատկացվել է 426 050 ՀՀ դրամ, որից՝ 145000 ՀՀ դրամ աշխատանքի ձեռք բերման և 281 050 ՀՀ դրամ նորոգման աշխատանքների համար անհրաժեշտ շինարարարկան ապրանքների համար:

Համայնքի կենտրոնական մասի բարեկարգման համար հատկացվել է 444 300 ՀՀ դրամ, որից՝ 249300 ՀՀ դրամ բարեկարգման համար անհրաժեշտ շինարարական ապրանքների համար և 195 000 ՀՀ դրամ աշխատանքի կատարման համար:

Համայնքային հողերի չափագրման ծառայությունների ձեռք բերման համար ծախսվել է 989 000 ՀՀ դրամ:

Իրականացվել է համայնքում առկա գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխություն:

Համայնքի Սունդուկյան և Բաղրամյան/վերջնամաս/ փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար ծախսվել է 784 950 ՀՀ դրամ գումար:

5. Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահեռացում, որի համար կնքվել է ծառայությունների ձեռք բերման պայմանագիր /տարվա կտրվածքով/ 1 980 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Գրիբոյեդով համայնքում և համայնքի աղբավայրում կուտակված աղբի մաքրման աշխատանքների համար հատկացվել է 300 000 ՀՀ դրամ:

Համայնքի Զարենց-Նարեկացի և Աղայան-Թարոյան փողոցների հատման մասերի բարեկազման նպատակով խողովակների ձեռք բերման համար ծախսվել է 60 000 ՀՀ դրամ:

Համայնքի Բաղրամյան և Փափազյան փողոցները հատող ջրահեռացման ցանցում խողովակի տեղադրման 300 000 ՀՀ դրամ:

Կենտրոնական փողոցի լուսերի փոփոխման համար ծախսվել է 56 700 ՀՀ դրամ:

Համայնքի գույքի գնահատման ծառայությունների ձեռք բերման համար ծախսվել է 240 000 ՀՀ դրամ գումար:

Գրիբոյեդով համայնքի կենտրոնական այգու լուսավորության ջահերի և հոսանքի լարերի փոփոխման համար հատկացվել է 88 600 ՀՀ դրամ:

Ձեռք է բերվել ջրի պոմպ 31 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Համայնքում կատարվող բարեկարգման աշխատանքների իրականացման համար ձեռք է բերվել գույք 193 500 ՀՀ դրամ արժողությամբ՝ / խոտհնձիչ, սղոց բենզինային՝ ծառերի հատման համար և աստիճան տրանսֆորմեր /:

6. Տրանսպորտի բնագավառում

Համայնքապետարանի կողմից կատարվել է մասնակի ավազապատման և գյուղամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

Կատարվել է համայնքի փողոցների հարթեցման և բարեկարգման աշխատանքների համար ծախսվել է 400 000 ՀՀ դրամ:

7. Առևտրի և սպասարկման բնագավառում

Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:

Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

8. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքապետարանը համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ուսանողներին որպես ճանապարհածախս տրամադրել է 45 000 ՀՀ դրամ:

Կանանց և մայրության տոնի կապակցությամբ համայնքապետարանի, համայնքային հիմնարկների աշխատող կանանց և համայնքի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինակոչիկների մայրերին շնորհավորելու և նվերներ գնելու համար հատկացվել է 195 700 ՀՀ դրամ:

Համայնքում բնակչի մահվան դեպքում հոգահանգստի համար որպես հարգանք և ցավակցություն ծաղկեպսակների ձեռք բերման համար ծախսվել է 320 000 ՀՀ դրամ գումար:

Համայնքի մանկապարտեզի ֆինանսավորման համար հատկացվել է 12 091 075 ՀՀ դրամ:

Եղեռնի զոհերի հիշատակը հարգելու և նշելու համար հատկացվել է 20 000 ՀՀ դրամ:

Մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք՝ համակարգիչ 372 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Հաղթանակի տոնի կապակցությամբ կազմակերպվել է հիշատակի տոն, որի համար հատկացվել է 34 000 դրամ:

Սարդարապատի հերոսամարտի և Հայաստանի Հանրապետության 100-ամյակի տոնների միջոցառման կազմակերպման համար հատկացվել է 186 800 ՀՀ դրամ, որից՝ 40 000 ՀՀ դրամ ծաղկեպսակի և ծաղիկների համար, 146 800 ՀՀ դրամ միջոցառման կազմակերպման համար:

Դպրոցն ավարտելու կապակցությամբ գյուղապետարանի կողմից շրջանավարտներին նվերներ գնելու համար հատկացվել է 53 550 ՀՀ դրամ :

Առաջին դասարանցիներին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ համայնքապետարանի կողմից նվերներ գնելու համար հատկացվել է 231 600 ՀՀ դրամ:

Անկախության տոնի կապակցությամբ ծաղկեպսակի և ծաղիկների ձեռք բերման համար ծախսվել է 24 000 ՀՀ դրամ:

Համայնքի դպրոցի մանկավարժներին շնորհավորելու և ուսուցչի տոնը նշելու համար հատկացվել է 32 660 ՀՀ դրամ:

Ամանորի կապակցությամբ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաներին երեխաներին նվերներ գնելու համար հատկացվել է 200 000 ՀՀ դրամ:

2018 թվականի նորածինների ընտանիքներին նվերներ գնելու համար հատկացվել է 249 200 ՀՀ դրամ:

9. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ. անձնակազմի և համայնքապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում է բացատրական աշխատանքներ:

Համայնքի խմելու ջրի սանիտարա-մանրէաբանական հետազոտության ծառայությունների համար ծախսվել է 101 000 ՀՀ դրամ գումար:

Համայնքում հրավիրվում են բժիշկ - մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Սոցիալապես 51 անապահով ընտանիքների տրվել է 1 695 000 ՀՀ դրամ որպես օգնություն:

10. Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուժսանիտարիայի բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում անասնագլխաքանակի հաշվառման ամենամյա աշխատանքներ:

Անասնաբույժի մատուցած ծառայությունների համար նրան որպես աշխատավարձ վճարվել է 488 356 ՀՀ դրամ գումար:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել հունիսյան ցանքաշրջանառության, ամսական հաշվետվություն ցանքաշրջանառության, ինչպես նաև պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտեխնիկայի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքի դաշտային հողատարածքների ագրոքիմիական հետազոտության ծառայությունների ձեռք բերման համար ծախսվել է 100 000 ՀՀ դրամ գումար:

Հակակարկտային կայանների համար հեղուկ գազ ձեռք բերելու համար ծախսվել է 100 000 ՀՀ դրամ գումար:

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Հիմնախնդիրներ

1. Գյուղի կենտրոնական ասֆալտապատ ճանապարհի քարուքանդ վիճակը:
2. Ոռոգման ջրի ցանցի կառուցում:
3. Մշակույթի տան շենքի վերանորոգումը:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 31 » հունվարի 2019թ.